

Այլ ի հովիտս մեր ծընար։  
Կաց, կաց առ մեզ, կոյս բարի  
Ջի երկիրս քեւ կարօտի։  
Ուր դու հայիս ակամք հաշտ՝  
Անդ անդորրը, անդ և զարունք.  
Եւ երեսաց քոց հրաժեղտ,  
Զմեն և կոիւ ձգեն զիետ։  
Զէ քեզ վայել պատուանդան,  
Երկիրս այս ցուրտ և խոպան։  
Այլ խոնարհելդ ինքնակամ,  
Լուծէ զեզոււ մեր կարկամ։  
Զի՞ խորս յորժամ իշանես  
Լոկ տէրն իշխէ գալ ընդ քեզ,  
Եւ մինչ ճախրեսդ յարե կոյս,  
Ու արծույն ի քէն տան թեւը խոյս։  
Եւ յայց ի տունս՝ ուր կոծէ  
Մայր ընդ մանկունս որբացեալ,  
Զամրեա ըզկաթ քաղցիելոյն,  
Եւ նորոգեամ, հրաշագործ,  
Զկատառոտուն հանդերձիկս։  
Հիկեա, ով կոյս, մանաւանդ  
Ի սնարս ցաւած անկողնոյն,  
Ուր ընդ առկայժ մոռոյն լոյս  
Եւ կեանք առկայժ ողորին։  
Եւ շողքն յորժամ մեռանին  
Ի բիրսն ցուրտ՝ սառնորակ,  
Ի տիուր և տիսեզդ ի սրտին  
Քզեզ ծագեամ, կոյս զըթած։  
Կաց կաց առ մեզ կոյս բարի  
Ջի երկիրս քեւ կարօտի։  
Ուսինք ելին մեզ բաժին,  
Խակ քեզ շնորհը յորդութեան։  
Յարտառուս մեր ծիածան,  
Եր մեզ բազին բերկրանաց։  
Անդը եկեսուր ուխտանուէր  
Յարունս տիոց և կենաց,  
Ի գերարծարծ հընոցէն։  
Քզկայժ հոգւոցս հրդեհել։  
Դարձցուը անդը և ընդ երեկս,  
Ընդ վերջալոյս այս կենաց,  
Խերել, ոհ, քոյդ ի սեղան՝  
Թերեւս ցամաք սիրտ ծերոյ,  
Այլ թէ հպիս միայն, Ցիրուէի,  
Բիւր քեզ օրէնքոս հնչեսցէ։  
Ո՞ր այլ Աստուած քան զիսուուած,  
Հրաշակերտեաց, ըզեզ, կոյս։

Զ'իջեալ երբեմն Տէրն յեղեմ,  
Քանդակողթակն արուեստիւ,  
Ընդ կաւակով աչս և ունչս,  
Փչեաց ըզըունչ իւր անեղ.  
Ո՛հ, զեղեցիկ էր Եւայ,  
Այլ լոկ մարդոյն ճահ յընծայ,  
Խակ ըզեզ, ով կոյս և մայր,  
Առիթ և կէտ ըզձութեանց,  
Այնքան եգիտ իւր նըման,  
Զի զբեզ ինքնին հարսնացոյց։

Հ. Ն. Անդրեևան

## ԳԱՐԵԳԻՆ ՍՐՈՒԱՆՉՏԵԱՆՑ

◇◇◇

Ինչ պարբերութիւններ որ այս էջեւուն մէջ արտատպեցինք իբրև նմոյշներ Արուանձտեան գրականութեան, անտարակոյս անոնք մեզի չեն ցոյց տար գեղեցկացիտական գերազանց զրական մեծ արժանիք։ Բայց զրոյը ունի ընդարձակ միտք մը, սակայն ոչ զարգացած։ և ատոր համար իր զրականութիւնը այն հրապոյը ունի ինչ որ մարգագետնի ինքնարոյս ծաղկիները, որոնց պարտիզպանն է ընութիւններ։

Արուանձտեանց աշխատած չէ գրական էջեր հիւսելու, նկարէն յղացումներ ունենալու, այլ դիտեր ու դիտելու տուեր է Հայաստանի պատկերը ինչպէս որ է։ Հայութիւնը ճանչնալու համար՝ Հայաստան կը ճամրորդէ։ «Հայ եղողը Հայաստանի հողանվարք ինքնինը հրաց ինքնինը կը ճանաչէ, ինքնինը վեհ և կենդանի կը գտնէ, փորձեցէր և տեսէց։ — Ահա Կ'երթամ ես, Հրամեցէց»։ Ետակերը զացին, մտան Հայաստան, սակայն հանգամանքները սպառնացող էին. արիւնէն ու կրակէն անցան. հայ աւերակներու վրայ մտածելու, հիանալու ժամեր չունեցան. դիակներու վրայ կոծեցին և կենդանի հայութեան փրկութիւնը մտածեցին։

իր գրչին հոգերանութիւնը շատ պարզ է: Հայաստանի և հայուն բնիկ ու բնական թերութիւնները չի շապարեց կեղծիքի մնդյորվ, տպեցութեամբը ցոյց կու տայ, վերերը կը զննէ, բողոքի գեղը կը բաէ: Կը սցանչանայ երբ կը գտնէ Հայաստանի զաւակներուն և հողին յասուկ հիացումի կէտեր: Առ հասարակ փափուկ սիրտ, տաքուկ հոգի մը ցոյց կու տայ իր հայրենիքին և հայրենակիցներուն: Կը սիրէ երբ տեսնէ համերաշխութիւն կրօնական անջատ հայերու միջնէ: Հայկական կեանքի և գրականութեան զարգացումին սասատիկ նախանձախնդիր, վրէժինզիր մանաւանդ վարժարանական բարգաւանումին:

Նկարագրութեան այն սիրուն փշրանցներն որ հոս հաւաքած եմ Արուանձտեանցի երկերէն, անոնց հաւասարիք են գրչի մը որ սրտէն կը բուրէ զզացմունց և հրապոյր, և ատով է որ Արուանձտեանցի լեզուն համակրելի է: Իր գրական արժանիքը այդ համակրելիութեան մէջ է: Եւ այդ փոքր արժանիք մը չէ, հեղինակ մը, որ համակրելի ըլլալու արժանիքն ունի, իրաւամբ կը յարգեմ ինչ պէս յարգած է նաև լամարդին՝ Քապիկ որ Մէսթոփ ուղղած արձակ գրութեան մէջ, իր սա ճշշգրիտ խօսքերով.

«Le pathétique est le sommet du génie; le didactique n'est qu'une leçon; l'épique n'est qu'un récit; la polémique n'est que du raisonnement; le lyrique n'est que l'enthousiasme; mais le pathétique, c'est le coeur».

Առ Արուանձտեանց, այդ համակրելի գրիք չը կրցաւ իր միտքը բեղմաւոր ընել, քանի որ ստիպուած էր հովուական զաւագանով իր հօսին հոգին մշակել, առաջնորդել և ցոյց տալ երկինքի ճամբան, իր ամէնէն բարձր կոչումը այդ էր, գրականութիւնը ժամանակի հաճոյց մէր, լաւ հաճոյց, զոր վայելած է միայն իր երկասիրութեանց և խմբագրական գործունէութեան ատեն, կան անձինց որ պարագաներու բերմամբ գրականութեան տաճա-

րին մէծ քուրմերէն չեն եղած. ատոնցմէտ է Արուանձտեանցը, և պատճառը իր «չանապատական ըլլալն է: Գրականութիւնը իրեն շատ պիտի նպաստէր, եթէ միմիայն անապատական կեանց մ'ունենար, հեռի ժողովրդական հոգածութիւններէ: Այդ բաղդը ունէր նահապես Ալիշանը, և ատոր համար է որ կը տեսնենց թերի կողմեր, երբ կը բաղդատենք «Յուշկէնները» «Թորոս Աղքարը»ի հասորներուն հետ: Ալիշան գտեր է գրական զաշոք, գտեր է զայն մշակելու ժամանակ, և կրցեր է հանդիսանալ ներհուն գրիչ, իսկ Արուանձտեանցը գրկուած է այդ գրական բաղդէն, որով միայն կրնայ պարձենալ իր բնատուր անոյց և գրակիչ լեզուովը գրական հմտութիւնը, պատմական և հնախօսական պաշարը շատ աղքատին է մեացած:

Եւ ինչ որ ալ ըլլայ, գրագէտ կամ գրասէր ու բանասէր նաև մանաւանդ ազգագրագէտ, անոր խնկելի յիշատակին վրայ կրնանց հիւսել համակրանքի դափնեպսակ մը, ու գուրգուրանքով զնել զայն Արտին վրայ, որ անկեղծ ու Հայրիկի խանդով բարախեր է Հայաստանի աւերակներուն, եկեղեցիներուն և զաւակներուն համար: «Թորոս Աղքար», «Գրոց Բրոց», «Հնոց Նորոց», «Մանանայ», «Հուշան Շատարշանայ», «Համով Հոսով» կը կազմին իր համակրանքի յուշարձանը գեղեցիկ, որուն վրայ պիտի սաւառնի իր «Տարօնյ Արծի»ը, և Հայրիկի «Վասպուրականի Արծի»ը և Պոլսոյ «Մեղոն» փեթակ մը պիտի ունենայ հոն այն յուշարձանին մէկ կողմը:

\* \* \*

Գրկուած էր Արուանձտեանց գրական պաշարէ, սակայն Հայաստանի գոները իրեն բաց ըլլալով, կրցաւ շատ օգտակար ըլլալ մեր ազգագրական ուսումնին: Այդ ճիւղին մէջ «Չեղեցկագէտ» այլ հնախօյց գրիչ մը կը փնտռենք: Իր «Գրոց ու Բրոց» յառաջարանին մէջ կը գրէ: «Ես իրեւ մեզու ապրած ու աշխատած եմ. զիս փե-

բակի մէջ կը պահէին և դրսէն դուռը կը ծեփէին. իմ օրերու մեծ մասը անլուսատես և փականցի տակ անցուցեր եմ. բայց երբ բաց գտեր եմ դուռը, փութացեր եմ ծաղիկներու վազել, մասիկ մասիկ անոնցմէ առնուլ, թուփէ թուփ թռչուելով, և հաւաքաճներէս շատը բամիին և պիծակներուն դէմ տարածելով, կրունցուցեր եմ. ահա ինչ որ մեացած էր բերանս, կը ծոնեմ ազգին բանասիրաց»: Ուրեմն երբ զնները բաց գտեր է, այն ատեն քաղեր ու պաշարեր է հայ հողին պարծանք պատութիւնները, առասպելները, աւանդութիւնները. կը գրէ իր «Մանայից» յառաջարանին մէջ. «Մանանայ կը մատուցանեմ հայ բանասիրաց ոչ իրրեն Սինայ Ախապատին երկնատեղաց նուիրական հաց, այլ իրբեւ Հայաստանի գաղպին, որ երկրի ծաղկանց հիւթերէն օդին մէջ կը զոյսնայ, ցողով այգոյն կը շաղամիի, արեւուն ջերմիկ ճառագայթներէն կը զանիք, կը հասուննայ և շաբարախմորի և մեղրի համով իրբեկ փինտ յակինթի կամ՝ հատ հատ մարգարիտ Կ'իշնայ մացաներու, տերեսց, զափի փշոց և մատուակի ոստոց վրայ ի զոյն արծաթափայլ, և ի ձեւ նուան նստի, զոր ծովով վճն նանկսիք և հարսունք բլիթ բլիթ յօրինելով պաշար կազմեն ի քաղցր ճաշակ անձանց և հիւրոց ի մեծարանու: — Ստոյգ է թէ բազմազան են տեսակը պարունակութեան զբցոյս, և խառնակ. բայց ես դիմամար ըրած եմ զայդ, ուզելով նիւթէ նիւթ փոփոխել փոյթ ընդ փոյթ, որպէսզի զուարճալի և անձանձրանալի ընեմ զործս և միանզամայն բազմախուռոն զրուցաց, երգելեաց և բանից ծանօթ՝ զընթերցողս: Գիտեմ թէ զանազան ախորժակ և ճաշակ ունեցողներն՝ զանազան դատաստան կ'ընեն ու կիցէ զործոյ մը. ուստի ջանացի գէթ իւրաքանչիւր որ իւր քիմքը զոհացնելու պատառ մը ուտելիք կամ պուտ մը ըմպէլիք կարողանայ զբունել այս թղթերուս մէջ»:

յացնէ: Մեր համեստ զգիչները աւելի թան-  
կագին են մեր զբականութեան համար, և  
անոր համար անոնք կը սիրուին, անոնց  
թերութիւնները քննադատներու աշքին առ-  
ջև չեն խորցնար:

«Մանաւայ»ին հեղինակը կը զրէ ինքն  
իր համար . «Ես գրականութեան այն  
շինական մշակն եմ, որ ի վայրիս և ի  
մայրիս կը թարթափի, լենային, դաշ-  
տային տունքիր ծաղիկներ և բոյսեր կը  
ժողովէ, և կողովով կ'ածէ զայն ի վա-  
ճառ ի հրապարակս քաղացին, յորմէ ա-  
ռեալ քաղաքացին՝ արուեստի կը վերա-  
տրնէ զայն և կը դարմանէ ի պարտէզ

— Խակապէս այս է իմ երկն , բանա-  
սիրաց և զրասիրաց համար պատրա-  
սուած նախնական նիւթ : Գրասէր և  
ընանասէր ազգայինք մեծ խանդավառու-  
թեամբ , սրտազեղ զգացմունքով մկրտեր  
և օծէր են այն ձեռքը որ Հայաստանի  
բուրաստանէն հայ զրական զաշտին վրայ  
սրսկեց մեր երկրի մանանան , երկնքին  
համը հոսը , և ընճայեց Շուշան մը պար-  
կեշտազեղ : Իր « Ծնորչներու » հետագայ  
տողերը , հաւաստիք են այն մեծ զնահա-  
տումին զոր տածած են իրեն զրչին մեր  
բանասէրները և հրապարակագիրները :  
Արուանձտեանց կը զրէ . « Համբուրեմ զաջ  
Ամենապատիւ Մ . Ներսէս Ա . Պատրիարք  
հօր , որ իւր միւռոնահուս մատներով հո-  
տաւորեց իմ անհոտ « Շուշան » : — Համ-  
բոյր Պատրիանեան Տէր Գարրիէլ ծերունի  
հօր , որ իւր նարդուսածոր զրչով իւր անյշշ  
և յօդ սրսկեց նոյն վայրի « Շուշանիս » ,  
և ուղամառուս և ուղամառուս ան :

— զամբոյք Հ. Գ. Ալիշանին, որ իւր հայրենացնեն չնորիկաց արձանի ըրած է իմ անշնորհ «Գրոցն ու Բրոցն». — Աղջոյն Պ. Յ. Յանազարեանին, որ իւր ոգեստանդ խանդով և բարձրաթռիչ մտքով ոգեւրած և թնաւորած է նոյն «Գրոց ու Բրոցիս» զօղեալ և թաղեալ իդձեր ու մազձերը: — Օրհնութիւն և գոկութիւն Աղա Յովկէփ իդմիրեանին, որ ի զիր և ի գանձ հանդիսացաւ ինձ Մեկնաս և գնահատեց իմ

գնոց անարժան « Հնոցն ու Նորոցն », և յոյս ու խրախոյս ընձեռնեց նոր վաստակոց, ոչ միայն ինձ, այլ և ամէն զրափրաց լինել մրցանակող»:

Եթէ ինչո՞ւ այսրան յարգանք, այսրան զնահատում: Պարզ է պատճառը. Արուանձտեանց առաջին անգամն էր որ Հայաստանի հրապոյրի ձայնը, զեղը և բորումը կը հասցընէց Հայ զրականութեան մէջ ամենահաւատարիմ ոճով մը, և այդ աշխատութիւնը, այդ ոճը սիրելի էր, ինը ազգազրական ուսումին մեծ հիմնացարեր կը զետեղէր:

Ի՞նչ է Հ. Ալիշանի «Հին Հաւատը»: — Մեր հնախօսութեան ոսկեփրեց: Ասկեփրը մըն ալ կը համարիմ Արուանձտեանցի կազմած «Գրոց ու Բրոց»: Այդ գիրը ըստ իս մեր վիպատքներու ու վիպասաններու շատ օգտակար կրնայ ըլլալ եթէ նպատակ ունին հայ հնութիւններով, առասպելներով, աւանապէլքերով ազգային վէպ մը պատրաստելու:

Եւ այն նորավէպ գրողները որ երեւակայութեան ճիգովը ոչ իրական վիպակներ կը յանան, ասոնց համար մանաւանդ սրանցելի աղբիւր մըն է «Գրոց ու Բրոց», և ինչ չնորհալի, գունագեղ վիպակներ կարելի է պատրաստել, եթէ վիպագրողը ունի երեւակայութիւն, գրական մշակուած միաց և նիւթերը իր վէպին՝ կ'առնէ այդ սիրունզգրեն: Եւ արդէն մեր վայրերու ամէն մէկ նկարագիրն որ կ'ընէ Արուանձտեանց, ինքնին իր պարզութեան մէջ հրապուրիչ է, առանց զրական կանոններու տակ ինալու: Կ'արտատպենը Արփան լերան մէկ կտորը.

«Ելիր մէկ վայրկեան այս Արփանայ հովիտը թաւալի՛ր, Հանգիր, շնչէ անմահական ծաղկանց և դալարեաց մէջը, ուր վտակ կը խոխոչէ, ուր սոխակը կը դայլայիէ, ուր կոռնկը կը կույ, ուր ծովը առջեւդ կը ծփծփայ, երջանկացիր թիչ մը: Է, տէ ել, Քիրոտ Մողրովի խոտնոցն է այդ, այս տեղը հասնանցի ցրտերու տեղն է: Եւ, թիչ մը յառաջ երթանը, ահա Արփանայ սարը, այդ ահագին բարձր, մա-

սիսակերպ սարը, զոր և Թովման Ալբառունին Մասիք կ'անուանէ, Գերմանացի վակնէրը՝ Գոռոզ լիու: Բնակիչները մէկ բան կ'երթան այս լեռան վրայ իրեւ հին երգ, և կ'ըսեն.

— Նոյայ տապանն եկաւ ի Սեփան, Ասաց,  
«Սիփան, առ զիս, առ զիս»:  
Սիփանն ասաց,  
«Գրնա՞ ի Մասիս, զընա՞ ի Մասիս,  
«Որ մեծ է քան զիս, որ բարձր է քան զիս»:

Ցապանն կորդուաց լեռներէն գալով առ Արփան՝ Գրգուռայ գլխով անցեր, և քսուելով կամ գրգոռելով՝ այս լերան սուրովի գլուխը ատշեր անցեր է եղեր: Սիփան լեռը վիճակառարար իւր ձիւնու գումար ամեն բարձր լեռներէն վեր կը ցուցնէ Վասպուրականի և Ցարոնայ բոլոր կողմնէրէն գրեթէ: Իւր ծովային երեսը իսկստ զուարթ է, բայց մէկալ կողմը՝ որ տարածուած է երկարօրէն Մանազկերուու զաշոր, պստիկ պստիկ ու կլորակ աստիճանաբար ըլլուրներ ունի ձևացուցած՝ որ սկ ու ցարոս են:

Միտքդ բեր Յովիր, որ իւր ցաւոց օրերու մէջ պանկած լինէր մէկ կշտին, ծունկ ծունկի դրած, սուները ծիգ պարզած, մէկ ձեռքի արմուկը գետին՝ և թաթը երեսին, գլուխը բարձր պահելով՝ կրթնած, տքար, թափէր արցունը իւր աշքերէն, և այդ էր Արփանայ գուակները:

Եռային որդերը իր անձին վրայ, և այդ էր Համանանցի Քրդերը:

Թափէին իւր գլխու մազերը, տրորուէր գանկի մորթը, և երեւէր լերկ ոսկորն ուղելին. և այդ էր Արփանայ ձիւնապատ ու սառոյցի որդերով եռացած գագաթը:

Թշնամանէին զինք իւր հացն ուտողները, դրացիներն ու բարեկամները, և ատոնք էին լաթառայ շեխեր ու աւազակ ֆախիրները:

Իւր կշտին ու կողին վրայ հանէր խոցերը, ու այդ նման էր Արփանայ սկ սկ կոյտ կոյտ բրակներուն:

Արդէն վագուց մեռեր էին իւր դատերը

ու որդիք, թալան տարեր էին իրեն ոչխարի հօտն, անջեայց, ուղարք, էջաց և ջուրիք։ Այս մեծ տարածութիւն Մանազկերտու դաշտին, որ քար ու քայլով—այսինքն մանր ու մեծ ժայռերով—լի է, անբոյս ու անմիտթար, և տիուր, գու ասես լիներ Յովրայ աղբիւսը, և ինցիները, որոնցով իւր վիրաց թարախն է քերեր։

Այս է այդ լեռան համառօտ նկարարագիր։

Բայց վէպը կը պատմէ բնակչաց բերնով թէ՝ «Սիփանայ սարը հայոց մեծ թագաւորի բերդն է եղեր։ Թէ՝ մէկ ծածուկ դուռն կայ այդ սարին, որ Մանազկերտցի քիւրտ մը միայն գիտէ, և ատոնց պապենական սեպահական աւանդութիւնն է որ միայն հայրն իւր տղային ծանուցանէ։ Թէ՝ այդ թիւրտը՝ թեպէս և գուոր ցոյց չի տար, բայց կը պատմէ թէ՝ ահազին քաղաք մը կայ շինուած Սիփանայ տակ, կամարակապ ու հաստատ չչնց, սաստիկ քամի կը խաղայ մէջը, բայց լոյս չկայ։ Թէ՝ տներ պալատներ, շուկայներ ու հրապարակներ կան մէջը։ Թէ՝ մէկ քանի երկարէ դռներ կան, որ միշտ ցոց են, և մենց կը կարծենց որ թագաւորի ճակերը — զէնցիքը — այն տեղ լինին, թէ՝ ամբար մը լեցուն եփած չոր հաց կայ, պարսիմար։ Թէ՝ մեծ գետ մը քալաքին մէջէն կ'անցնի։ Եւ այլ շատ աւելի բաներ, ուրո՞նց չկրցայ ամբողջն իմանալ ու գրել։ Ափսոս Սիփանը այդ շրջապատող գաւառներու առ հասարակ բնակչաց ողիմափոսն է և պառնաս։ Իրենց սէրն ու զիւցազնութիւնը անոր կը նուիրեն։ Մուսայից ու քաջաց միանգամայն շնորհատու կը զաւանին զայն։ Աւազակները անոր մեծ ու ընդարձակ խորշերու և այլերու մէջ կ'ապաստանին։ զէնցիք և ձիու կրթութիւնը Սիփանայ լեռնադաշտին մէջը կ'ուստանին։ զեղերու հոտազները և դաշտը հաց բերող աղջիկները՝ երբ իրարու միրահարին, կ'առեւանգեն զիրար և Սիփանայ կ'ապաստանին։ Սիփանայ դաշտաւէտ մարգերու մէջ վրանի տակ բնակող ոչխար կթող գիւրտ աղջիկները՝ երբ երիւ-

տասարդ քիւրտ խորր հովուի մը սիրահարին, նախիրէն կը բռնեն կրտած ձի մը, և զոյզ հեծած անոր զաւակին, ուղղակի կը քշեն Սիփանայ սարի սարաւանդները։ Ձիու զովուն ես կը դարձնեն, վարոց մը կը զարնեն։ Ճին կը դառնայ իւր երամին, ամենայն հաւատարմութեամբ գաղտնապահ լինելով և ոչ ումեց պատմելով իւր բեկին ուր լինելու։

Թէպէտ զիտնան ալ փախուցելոց պապն ու մամը, բայց չեն երթար ետևէն, պատկանելով կամ պատիւ պահելով Սիփանին, ինչպէս լոնտրայէն ես չեն առնուիր հոն փախչող և ապաստանող քաղաքական յանցաւորները։ Այս է պատճառը, որ այդ Հասնանցի Քրդերը իրենց քաջաց յալթելու երզը, կամ քաջարար մեռնելու եղերզը, միշտ Սիփանայ կոչումով կ'ոգեւորեն, անոր անունով կ'օծեն իւրենց տաղին տողերը, և բանին բառերն ու տոնները, և անոնց սիրահարական շատ մը երգերու զարդն ու խանզդ Սիփանայ սարն է։ Թէպէտ լինին ասոնք քրդերէն լեզուով, բայց շատերու յօրինող Հայերն, նշանաւոր է այն խազը որ կ'ակսի այս բառերով, «Մարէ Սիփանէ...» որուն մէջ կը պատմուի սև տղայի մը և աղջկան մը վէպը, որը միմնաց սիրահարուելով փախած են Սիփանայ զլուի, և երեց օր երեց զիշեր առանց հացի զիրար սիրելով միայն ապրած են, բայց երբ քաղցը նեղեր է զիրենը, սև տղան հրացան առերեկը որս մը զարնելու, զոնէ զայն ուստեն ու քիչ մը կ'ազդուրուին։ աղջկին ալ քարի մը վրայ կայնած կը զիտէ։ սև տղայն կը պատահի եղնիկի մը, զրացանը կը պարպէ, կը զիպցնէ եղնիկի կողին։ արինը կը հոսէ, եղնիկի կ'իշնի վիրաւոր, և կ'ուզէ գագել բայց կ'իշնայ...։ Եւ տղին զինցը կը ձգէ որ եղնիկը բռնէ շրփախցնէ, և ահա ինըն ալ զահավէժ կը հոսի բարերէն, և կտոր կտոր կ'իշնայ մեռեալ, Աղջկիկը ծնկներուն զարնելով, վարսերը փետելով, կը նստի քարին վրայ, աջ ձեռքը երեսին, ձախ ձեռքը վեր ծծեւուն զրած, կ'ակսի սրտառուց արսուուով

մը իւր ողբը ողբաւ, յորում կը կշտամքէ  
սև տղայի խստասրտութիւնը, թէ՝  
«ինչո՞ւ մենակ ելաւ որսի»:  
Թէ՛ ինչո՞ւ զարկաւ եղնիկն, որ գուցէ  
այն ալ սիրական մ'ունէր իրեն այս վայ-  
րերուն մէջ մեզի պէս:

Թէ՛ ահա սիրոյ Աստուածը արդար ու  
վաղահաս ըրա իր դատաստանը:

Կ'անձէ խստասրտու մարդիկ՝ որ ար-  
գելք կը լինին բնական սիրոյ, և այսպիսի  
աղէտից առիթ կը լինին:

Թէ՛ իրեն համար ելաւ լեռը ինքն, ի-  
րեն համար և իրեն հետ կը մեռնի»:

— Եւ ահա ինքզինքն ալ կը գահա-  
վիմէ քարերէն ի վայր և ս տղայի սիրոյն  
և մահուանը վրայ՝<sup>1</sup>:

Եւ այդ պատառիկին մէջ կը նկատենց  
որ Արուածտեանցը միանգամայն կը ներ-  
կայանայ, նախ չոր նկարագրող մը աշ-  
խարհագրական չափերով, սահմաններով,  
յետոյ յանկարծ կը վառի հայրենիքի վայ-  
րերու սիրով, կը բանայ առասպեկներու  
դոներն ու կը տեսնենք երեսակայութեամբ  
կառուցուած հրաշալի քաղաք մը. բայց ա-  
մենքն աւելի ուշազրա է իր քաղդասա-  
կան նկարագրութեան մէջ, զարշանց մը,  
զզուանց մը գուցէ զզացուի. սակայն պէտք  
է զիտնալ որ Արուածտեանց ոչ մշա-  
կուած, այլ բնական զրագէտ մ'է, ու ո-  
րով բնականին մէջ ապրող։ Եւ որքան  
հոգերանական նրբին գորով մը կը պա-  
րունակէ իր սիրահարական հէքիաթը։ Զէ-  
խով մը ցեցով յայտնած է այդ հէքեաթի  
սիրունոյն գորովին նման ցաւը, իսկ հայ-  
կական առասպեկլ, աւելի ազնուական կեն-  
դանի մը զտած է որուն վրայ կը ցաւի.  
«ինչո՞ւ զարկաւ եղնիկն, որ գուցէ այն

ալ սիրահար մ'ունէր». անդին ռուս վի-  
պասանին թուղթ խաղացող փոքրիկ տը-  
ղաք, կը ցաւին որ ցեց մը կը սպանուի,  
կը խորհրդածեն որ միթէ այն փոքրիկներ  
չունին, ինչո՞ւ անոնք անտէր մեան... Մե-  
րը սիրական, ռուսինը ընկերական հոգե-

բանութիւն։ Սակայն երկուցին սէրն աւ  
նրբանաշակ ու ազնուական։

Եւ Արուածտեանցի գիրքն ու էջերն չի  
գոցած առնենք «Հայրենիաց համն ու հո-  
տը» իր չքնաղ Մանանայ գրցէն.

«Վանայ այցեստանց, որ տեղական  
բարբառով կ'ըսուի եղնատը, բնութեան  
ու բնակչաց մեռքով վայելչագեղ զար-  
դարած երանաւէտ վայրեր են. ուր իւրա-  
քանչիւր տունը իրեն կից ունի ծառաս-  
տան, այցեստան, բուրաստան և իր դրան  
առջևի փողոցին երկու եզերը՝ առուներ  
շրալից, որոց ափերը կարգաւ տնկուած  
են սաղարթախտ մանրատեր ուրիներ,  
տեղ տեղ ևս բարախն, կաղամախ, հա-  
ցենին, թեղին. Փողոցներու մէջտեղը՝ հա-  
սարակաց ընդարձակ ուղին, և ճաղարդ  
ծանր թեւերն ու տերենները այս և այն  
կողմէն իրալու գրկուած ու խառնըւած,  
սբանչելի հովանոց կը կազմեն անցորդաց,  
որոց մէջն արենու ճառավայթները ծանր  
ծանր հողմածիկ սաղերու նման կը ծա-  
գին գետնին վրայ, անցնողին կամ նսոռ-  
ողին գլխուն ու երեսաց վրայ ծածնալով,  
ինչպէս խաղան զիշերուան մը մէջ լրաւոյ  
հով ճաճանչները կը փայլեցնէ զեփիւր  
ծովուն ափանց մօտ եղած ջրերուն ծո-  
ցիկ, նոյն ծառերը՝ որոց կանանչ ու դա-  
լար վարսեր կը օծանին օդին ցօլով և ա-  
րեին ջերմով, իրենց արմատները ի գնացս  
ջուց կ'ուռանան, ջուցը խոխուելով,  
գուլըըլալով կ անցնին, լզելով այն ծառոց  
ուսերը, ոսոգելով իւրաքանչիւրին սահ-  
մանեալ այզին, պարտէզն ու բուրաստա-  
նը, մատակարարելով առ հասարակ տանց  
ի լուացումն, ի յըմպելիս և առ յամենայն  
պէտու

«Այն տեղի առաւօտը՝ ոչ արեւածագումն  
է, և ոչ քաղաքակրթեալ տեղերու պէս՝  
արեւածագումն քանի մը ժամ ետքը. այլ՝  
երբ լուսոյ աստղը իր գլուխը բարձրացնէ  
վարագայ Գալիլիայէն, վայրիկ մի ևս, և  
ահա կը հորիզոնանայ Շուշանից զագա-  
թան Ջիաթոնուկին վրայ, ուր կարմրւո-  
րայ վանից գմբէթի խաչն առաջին ան-  
գամ բարի լոյս կու տայ կ'առնու, և մըթ-

1. «Գրոց ու թրոց» 54.

նանշմար կը փէլկուայ. այս վայրկեանիս Այզեստաննեայց եկեղեցեաց ժամհարները տանիքը ելած՝ երեսները երիցս կը խաչակնքեն. « Գողոս ժամ » կը զարնեն - զողերը կ'անհետանան. - գեւերը կը հաւածուին, և զազանները որջերը կը բաշուին: Ժամհարը ժամին դուռը բանալով՝ երեք բիրան «օրհնեալ եւ Աստուած» կ'ըսէ. ու կ'սկսին ձեռաց կոշնակները դրաբը դրաբը հնչեցնելով թաղէ թաղ շուրջ զաւ, ամէն Հայ Քրիստոնէի դրան ճկիկը զարնել և «Ոլորմի՛ Աստուած» կանչել. երբ իրենց շըջանը լմիցնելով ետ կը դառնան, իրենց ետեր ձգելով կը բերեն խուռներամ մանկտիները, անոնց որ հայր կամ մեծ եղբայր չունին տան մէջը. իսկ որք ունին, կը ստիպեն կը յարուցանեն ծնողը կամ եղբայր, որք ձեռքերէն բռնելով կ'երթան դէպ եկեղեց «Զարթից» կարգալու:

« Ալրուսեկին ծագութն և ժամհարի կոչնակը՝ ընդհանուր ազգեցութիւն կ'ընեն մեր աշխարհի բնակչաց, ընդհանուր նշանէ այդ կէտը, այդ պահը, սթափելու ի քննյ: Ճիշդ այն բոպէին երկրագործի գումէջն ու կովը իր խոնջնեցն անցուցած լինելով, ընկողմանած տեղէն փեալով փընթփընթալով յոտին կը կանգնի. Կովը իր բառաջը կ'արձակէ, այծը կը մկմկայ. մաքին կը բըսայ. Ճին կը տրոփէ և կը վրնջէ. Էշն իր անճոռնի զուռնան կը փչէ: Աւագ մշակները՝ իրենց արշէլէն (չունէ և փայտէ կազմած մահիճ) վար կ'իջնեն, ջուր, խոռ և զարման կը մատակարարեն: Ճիշդ այն բոպէին, երբ վանայ երկու տասան եկեղեցեաց կոշնակները որոտաւ իր կը հնչուին, ագօրն իր թեւերը թափ ու ծուփ տալով իր « Կուկուկուն » կը կանչէ. և որովհետեւ տուն չկայ որ աքլոր չոմնեայ, - ացլոր՝ որ Ալրաշի շինած և լարած ոգեոր և կինդանի ժամացոյցն է, որ անվրէպ իր վայրկեաններուն կը հսկէ ու իր պահուն կը կանչէ, և իր իմաստութեան հետ ունեցած զեղեցկակերտութեամբն ալ փառը անձին կը համարի, անխալ և անմթերի կատարել իր պաշտօնը, որով և իր Ալրաշիցը կը փառաւորէ. -

այսպէս խուռն բազմութեամբ ժայնից արլորներուն ընդհանուր աղաղակաւ կը հնանի բնակչաց տունն ու թաղը, և կը դղրդէն ականջները:

« Այդ այզեստաննեայց ծառերու ոստիքն կախուած, կամ անոնց ճրդերու արմուկներու վրայ հաստատուած են բոյներ զանազան թոչնոց, որք իրենց ծագերով ծուարած կը թառին հոն. զեփիւոր կ'երերէ զանոնք և ի ներքրուստ զբդզալով գրնացող առուկն ջուրը բաղդր օրօր կը սուլուլէ. լուսոյ աստղը իր շափողը կը ծագէ չի ծագեր իսկոյն կը բացուին ասոնց բիրերը. հաւկոր կեղեր կ'իջնայ անոնց աշերէն, ծագման շողէն կը շողզողայ կէծելի պէս անոնց լոյս պտուղը. մեր այս ցնացած ցնարներ կ'սկսին գեղգեղելի հազար ու բիւր եղանակները. Տուներու մէջէն ընդհանուր շարժման ձայններ և նշաններ կ'եւլն: Մանկիկը արթնցեր կու լայ, մէկին մայրը կաթ կու տայ, մէկ՝ կ'օրօրէ դարդար ասելով, ջոջ մամէն՝ չախմախ և կայծքար իրար կը զարնէ, որ կրակ հանէ, ճրագ վառէ, թեռ մամէն՝ շապիկ միմէլ (սպիտակ սաւան) հագեր կ'եւնէ ժամ երթալու. Տանտիկին՝ թոնիրը կպուցեր կը վառէ: Հացթուկը՝ թոնիրի շուրջը նստած հաց կը կողէ, բագէ հացի և գիշրասեփի հոտը չորս կողմը բռներ. է: Մէկ թաղ՝ հաց կը բաժնեն փողոցէն անցուղարձին. մէկալ տեղը՝ մատաղ. ուրիշ տեղ մը հարիսայ, Գեռ լուսոյ աստղը մեր ցոյց տուած հորիզոնին վրայ կեցած՝ այս ամէնը տեղի կ'ունենան:

« Ճունէ՝ մը ճախրակ մանելու ժայն կու գայ, տեղ մը՝ կուաւ կը գործեն: Փողոցէն ջուրը վեր երթացողներ կ'անցնեն. եթէ հայ են, շատ մեղմիկ կը մըմջան. իսկ եթէ տաճիկ՝ մեծ ձայնով մամի կը կանչեն:

« Ամէն դուռ մէկ աղջիկ կամ հարս կ'եւան, որոնք ձեւ շրջանը (ջրցանը) ըրած են, և ներսի բակերը աւլելէն զկնի եկած են փողոցներն աւլելու. - Ժամանակ մը երր իրեւ զարդ իրուսաղէմէն բերած շշի ապարան ջաններ կը շարէին իրենց

բազուկները ամէն նորահասներ, մի նոր ներդաշնակութիւն ալ ասոնց աւել ըրած ժամանակ այն շիշերու շընկըրնկոցէն կը յօրինուէր: — Ամէն առուներու եզերը լի են արք, կանայք, մանկատիք, որք իրենց երեսները կը լուսան, և իրենց մազիք աղօթքներ կը մրժնջն դէպ աղօթքարան գառնալով և խաչակնքելով:

«Եթէ օրն ուտիր է կամ տօն է, զի՞ւաւոր փողոցներու հրապարակները, — զոր տեղացիք՝ փողիդրիք կ'անուանն, և փողոցը՝ փողակ. — մեծ լուսով ճրագներ կ'երենի, ուր ճրագուն կը վարին մսագործները, և ճիշդ ժամէարի ժամուն կը զենոն պատրաստն միսերը, որպէս զի թոնիք վառելուն համնի, և մինչէ ժամէն ելլելը եփուի: Աւրեմ դիրք վեր վեր նկարագրածիս կարգին նաև փողնի զլուխներու շանց հաշիմն ու շառաչիմն և կատուներու բազմութեան մլավուները. հոն արդէն եկեր պաշարեր են ազուաւները, ցիները, անձեղները, զա զա, երամ երամ, ո՛ր յիսուն, ո՛ր ճարիւր, մորթածէն ասոնց բաժինները կան, սարսափելի յարձակումներ կ'ընեն մորթողին, որ շատ սոսկալի և սիրալի տեսարան կը զառնայ. շունչն իրեն համար կ'ուզէ խլել, իրար հըելով, լեզուներով իրենց շըները լցելով, և մերթ զրուալով, մերթ հաչելով և պոչը շարժելով. կատուն՝ թագնարար կ'ուզէ թողէն յափշտակել. անձեղը ուր որ հասնի կառոցը կը զարնէ. և մորթողն ոչ իր հաստ ձայնով, ոչ իր դանակով ոչ վաղակաւորով և ո՛չ տապարով չկրնար այս բանակին յաղթել. ամէն կողմ կը զառնայ զարնելու, ոչ մէկին կրնայ զարնել, եթէ մէկին տարածին ետեխն վազէ, մէկալնը թաւցեալն աւար կ'ընեն, դասարք կը պոռայ, և իր չորս կողմն գումոց, գվավոց տիրածէ:

«Ջրաշխա՝ քար մը դրեր գլխի տակ և իր ձեռքի փայտը գրկած պառկեր փողոցի ծառերու մէջ, ականջ տուեր ջրի ձայնին կը յորդայ, և իր վրայէն, ոստերու անտառէն կը լոտիկ սոխակին դայլայլիք. ճախրակմանիկն (թռչուն է) «ճիվի ճիվի»

փափուկ ձայն կ'արձակէ, ծրծեռնակը «ծիծո, ծիծո» ծլվլալով՝ հողմոց շափ արագթն անցուղարձ կ'ընէ, և ամրեկը իր ամենարուստ եղանակաւ հրեշտակաց նախանձը կը շարժէ:

«Այս ելւա ուսրու Աւմբլատն կու զայ առուն չիթերը լուալու: Խիաբ (զուլհակ) ուսթա Պատուրն՝ ստեծները (գետին ցցուած փայտեր) կը շարէ հինած հիներու: Սարակները՝ բանը թեւերուն վրայ դրած կ'երթան ժամու զուուր, այդի փորելու համար վարձուելու: Պատ շարողներ, աղիւս կտրողներ՝ ետև է ետև կ'երթան ժամ, բանի մը ծունըր աղօթք ընելու և երթալու իրենց զործին: Հատ հատ ժիաւուներ կը տեսնուին, որ կ'երթան գեղերը իրենց արտերուն նայելու:

«Խսկ զեղացիները՝ արդէն սթափած են այն փորդիկ թուչնիկի աղդամյնէն, որ կու զայ կը նստի երդիքներուն վրայ և կը կանչէ «լծէ լծէ»: արդէն պատրաստած են իրենց հարօրներ և լուծերը, երկիրը բաւական հելկեր են: Ոչխարի հօտ գիշերուան ցողով թրջած մատղազ արաներէն քաղցր նախանձ մը ճարակեր է, և ջանափիկին Մամիկը տան մեծին ու պըզտիկին ակրաս (խահվալթի) բաժներ է ու տելու. և անա նախիրն ու որդիկները կը հանէ:

«Փայլն ու գազան փախեր են դաշտէն ու լիոներէն, հովիւներու և հօտաղներու հետ գնացող շուներու ոտն ու հոտն հաւածական ըրեր է զանոնք:

«Գիղի աղջիկներ մէզարներ (շալէ պօղչայ) կապած երամ երամ կը քալեն դէպ ի մարգահովիաները, ծաղիկները կոփելով, ծաղիկներ քաղելով և իրարու վրայ ցանելով, ծիծաղելով՝ խայտալով. կը պատահին կացաւներու երամին, լորին, արտուտիկին, որը իրենց ձագերով կը գվզվան և իսուերու տակէն կը թուշտին թուփէ թուփ, տերէտ տերե. նմանիլ ուզելով իրարու. — Դու ասա, թէ ո՞ր որոց, աղջինը թեւաւոր թուչնոց, թէ թուչնոց ուսնաթորիկ աղջկանց: — Եւ կ'անցնին կ'երթան յառաջ՝ բանջարները ժողվելու, ի-

բնեց արձագանք տալով առնելով զեփիւ-  
ովին, աղջկունք՝ «քա՛, քա՛, քա՛», կարա-  
ւունք՝ «զավ, զավ, զավ»:

«Լոռունին երամով կարաւան է կազմեր  
պահածն, բարձր օդերչն ի վեր կ'անցնի  
«կռո՛ւ, կռո՛ւ» կանչելով. — ծառայ եմ  
ծայսին; —

«Հօտ կօտ վասգէլ, որ է վրագիլն,  
երկան սրունքները բշտած, կտուցը սրած,  
«հօտ, հօտ ձայներով իր բռնէն ելեր  
ի դաշտ կը վազէ՛ ջրի և ցամաքի օձերը  
ձերբակալելու և սպաննելու, իրբեւ ոս-  
տիկան և իրբեւ զատաւոր: Չորթան զա-  
րուկ՝ զողի պէս շինականի տանիքներուն  
վրայ և բակերուն մէջ պահկըսուիր, որ-  
պէսզի չորթան մը յափրշտակէ:

«Կոյր բռն այս ժամուն իրեն համար  
բոյն մը կ'որոնէ, որ ծածկուի, ծուարի  
այն տեղ, զատրեցնելով իր բռժարկու  
«վայ վայ» ձայնը, զոր կը հնչեցներ չոր-  
ցած ծառի մը կամ գերեզմանաթարի մը  
վրայ նստած:

«Յի՞ն ի վեր ի վայր կը խոյանայ կը  
խոյանայ սուր ձայնի «ցի՞նինինի» կան-  
չելով. և ջկնկուն՝ զետերու ափերը կը  
դիմէ, «ձրկ ձրկ» ձայն հանելով ձուկ մուկ  
կ'որոնէ կը լլելու:

«Ալոս, բազն ու զա՞ ջրերու վրայ  
նստած՝ կայտառ նաւաստիներու պէս կը  
թովուն և կ'եղանակեն:

«Սանդղակատար բուրուն անհնագիստ  
կ'ոստոսէ և անդազար կ'աղաղակէ «բո՛ւ  
բո՛ւ»:

«Դեղնապորտիկն՝ Եւրոպացի օրիորդաց  
նման փափուկ և մաքուր շղարշներ հա-  
զած ճերմակ ու դեղին, և չայաստանի  
հարսներուն նման իր աչքերը թուի դե-  
ղով ծարուրած՝ մանր մացաններու մէջին  
կամ խիս խոտերէն իր ձայնը կը լսեցնէ,  
իր դէմքը կը ցցնէ ու կը թագուցանէ,  
բուլքուլին անճանաչ եղողներուն ինքինքն  
իրբեւ բուլ բուլ կը ծախէ:

«Ցուլուլին ձայնը ամէն եղանակաց  
ձայնին հետ կը լսուի. Նորա շունջը բնու-  
թեան համայն երածշտական գեղեղանաց  
զապանակն է:

«Բարբարոս բազէն, որուազնդուստ ձայ-  
նիւ և շեշտակի սաւառնմամբ օդէն ի վար,  
օդէն ի վեր սաւառնաթե կը մլանայ. ան-  
մեղ ու անզգըշ աղաւնի մը կամ տատրակ  
մը պատառելու:

«Ոնզերը լոռ (ծրի) ուտող ցիւլտերու  
պէս ընկեր կ'անցնին, հոտ առած են մե-  
ռածի մը, կամ մեռուցածի մը, աւարելու  
կ'երթան և կողոպտելու անոր դիակին  
միսերը:

«Ործիւն հազիւ ուրեք կ'երեսի. անոր  
հզօր թեոց քաղիսումէն, օդը շառաչմամբ  
պատրուէն բոլոր թոշունց կը լուն վայր  
մի. մինչեւ անցնի այդ անեղ և փառահեղ  
արքայն:

«Եինական հարսները երեսները փա-  
թաթած՝ բազուկները բաց, սափոր մի ու-  
սին և սափոր մի ի ձեռին՝ կ'երթան տղ-  
բիւրէն չուր առնելու, իսկ պառաւ զատէն  
բարի մը կրակ դրած, վրան պտուզ մը  
խոնկ, խաջաբարի մը առջև կը տանի,  
և ինցն իր երեսները հովին վրայ գնելով,  
ի ծունկն նստելով, երերալով, մաղուե-  
լով, բռամք իր կուրծքը կը ծեծէ. և խիստ  
սրտառուչ մորմորելով մը՝ «Տէր ողոր-  
մեա» կ'ըսէ:

— Այս կերպն է աղօթից այն ամէն  
գեղերն ու տեղերը, ուր կամ եկեղեցին  
աւեր է, կամ տէրտէր չունին: Մամիկն  
հարսներով և աղջկէներով, պապիկն ե-  
րիտասարցներով և ճեմերով կը դիմէն խաչ-  
քարերը կամ եկեղեցոյ շէն ու աւերակ  
պատերուն մէջն ու ցովերը. իւրաքանչիւր  
իր սրտէն բղսած կամ իր մեծէն ուսած  
ազօթք մը կ'ըսէ ու կ'երկիրպական կա-  
տուծոյ»: —

Այս պակեր մըն է որ մեր գրակա-  
նութեան թանգարանին մէջ կը մնայ, ու  
զինքը գիտողները շատ պիտի ըլլան. և  
գուցէ յարզը աւելի շատնայ, երբ ժանտ  
բաղդը մի առ մի կողոպտէ մեր երկրին  
յասուկ բարցերն, ազգազրական աւան-  
դական սովորութիւններն ալ օտարանան,

Խորթանան : Արուանձտեանց ամէն մէկ պատկերին մէջ միշա իր պարզունակ գոյներն ցոյց տւած է : Ինըը բնոստվանած է որ զրական լեզուական հմտութիւն չունի. «Ես աս զրածներէս անդին բան մը չփառեմ, և ոչ ալ արուեստ մը կամ ուրիշ լեզու մը...»<sup>1</sup>: Բայց քանի որ Հայատանի կեանցին ու սրտին հարազատ գոյներով պատրաստած է իր նկարագրութիւները, անոնց բնականաբար մեզի համար շատ մեծ յարգ մ'ունին : Կ'արժէ յիշել Գրիգոր Օտեանի նամակը՝ «Համով հոսով»ին առթիւ Արուանձտեանցի զրուած. «Չեր ոճին մէջ՝ հայոց կոպազտական դարերու մոգութիւնն ու զիւթութիւնը կայ. ձեր զգացումներն ու մտածութիւնները՝ ըրբատոնէական դարերուն սրբութիւնն ու կուսութիւնը ունին... դուք ոչ իբրև բնագէտ ու բնալոյց կը պարտիք ու կը զատէց ծառն ու քարը, հողն ու ջուրը, զուր հոգի կը տեսնէց ամէն բանի մէջ, և եթէ բան մը հոգի չունի՞ զուր հոգի կու տաց անոր»: Հատ պարզ, շատ կուռ ու հաւատարիմ թարգման Արուանձտեան զրական գործի արժէցին ու պարծանցին: Հանեկան նշմարտութիւն մին ալ կը գտնեմ Պ. Արփիար Արփիարեանի սս խօսքը . «Արուանձտեանցին զրերը մեր բանատեղական հրատարակութեանց շարքը կարելի է դասել»: Եւ ահա այս պատճառաւ է որ հատընտիք զրական երկերու մէջ կը տեսնենք Արուանձտեանցի զրերէն էջեր, և այդ իսկ պատճառաւ մենք ալ լայն տեղ մը տուփնց, մեղալեզու հեղինակին այս զրութեանս մէջ:

Հ. Ս. ԵՐԵՄԵԱՆ

1. «Մահանայ» էջ 144.



Ո.Ի.Ն.Է. ՊԱԶ.Է.Ն

ԱՆԴԱՄ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԱԵՄԱՐԱՆԻՆ

## ՏՈՆԱՍԻԵՆ

Ե.

ԳՐԱԿԱՆԱԿԱՐ

Յուլիս ամսոյ վերջին օրերը, պաշտօնեայն՝ որ շարաթ մ'առաջ եկած էր պահանջելու լուսառնէն յետամեաց վարձերու վճարումը, նորին եկաւ յանուն Որ. Բէն-հուայի զրաւելու կահկարասահները: Լուսան, երբ տեսաւ որ երկու գիւղացի վկայներու հետ գէպի Ռող կրիյսն կ'ելլէր, դադրեցուց արգէն լաւ հասունցած ցորենը հընծելը՝ որուն միայն մէկ ակօսը հնձած էր դեռ, մանգաղին ծայրը գետինը խոթեց ու զնաց իսոպանին ծայրը, անտառին եղերը, մացած միակ և հսկայ զեղնածաղիկի թուփին տուաւ կրնակը: Հոն, թեները կուրծցին վրայ ծալլած, մէկ նայուածցով ընդգրկելով ազգակին ամրողութիւնը, չորս արտավար տեղ՝ ուր այնչափ աշխատութիւն թափիր էր, այնչափ թշուառութիւն կրեր էր, աշխարհիս վրայ ունեցած ուրը և յոյսը. սպասեց:

Պաշտօնեանը իրեն ընկերացող մարդիկը բլբակին ստորոտը թողուց և ինըը գէպի պարակը յատաշացաւ: Աղքատ կը թուէր գիւղացւոյն նման՝ որուն ունեցածը գրաւելու կու գար, վերնազգեստը՝ հինցաց, թաղեւէ զիւարկը՝ պատառոտուն, իյնալով ելլեռվ ակօսներուն մէջ, ու երբեմն կը բարձրացնէր նիհար գլուխը, կրվին սպիտակ կիսամօրուուկ շրջապատեալ դէմըը, զիտելու համար թէ լուսան պիտի թողու որ արտին զլուխը հասնի առանց մէկ երկու քայլ ընդառաջ գալու: Մակայն լուսան անշարժ կը կենար: Արք երկուցին